## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

### ՅՈՐԱԴՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ

**Մայիս 2.** Արժանապատիւ Ստեփաննոս Վարդապետն Մխիթարեանց Նոր-Նախիջևանայ Յաջորդ կարգեցաւ ի տեղի Յովհաննէս Վարդապետի Տէր Յարութիւնեանց, որ արձակուեցաւ յիշեալ պաշտօնէն՝ զննութեան ենթարկուելով:

— **11.** Ըստ խնդրանաց և վկայութեան հասարակութեան Հայոց Նոր-Նախիջևանայ, ի բաւական ժամանակաց հետէ քահանայագործութենէ բողոքմամբ դադարած Կարապետն Զաքարեանց գինեմոլութեան ախտէն ըստ ամենայնի հեռացած լինելով՝ իւր ի սրտէ զղջմամբ և ապաշխարութեամբ, կրկին Հայաստանեայց Եկեղեցւոյ ծոցը ընդունեցաւ միանգամայն հրաման ստանալով քահանայութեան պաշտօն կատարելու, բացի Ս. Պատարագ մատուցանելոյ:

— **21.** Արժանապատիւ Գրիգոր Վարդապետն Տէր Ստեփաննոսեանց Ս. Աթոռոյս գանձապետ կարգեցաւ, փոխանակ Արժանապատիւ Եսայի Վարդապետի, որ իւր անձնական տկարութեան համար Տփխիս օդափոխութեան գնալու թոյլտուութիւն ստացաւ: —

Սինօդի Ատենադպիր Պ. Աւքիստ Թաղիանոսեանցը յատուկ պաշտօնով միամսեայ միջոցաւ գնաց ի Ն.-Նախիջևան:

---

եւ ի յագուրդ հետաքրքրութեան բանասիրաց:

Զայն զայս յիշատակարան յատկապէս յօրինեալ եւ գրեալ է բարեպաշտ եւ ուսումնասէր թագաւորն Հայոց Հեթում Բ. ի վերջ Աստուածաշնչի միոյ ընտիր օրինակի, զոր յիւր ի վայելս գաղափարեալ է յընտրելագոյն օրինակէ Ստեփաննոս անուն ծերունի ոմն, ի վերայ մագաղաթի, բոլորագիր, գեղանի գրչութեամբ, ի թուին Հայոց ՉԽԴ. եւ ի փրկչական 1295:

Յսկիզբն սորին (յիշատակարանի) զոյ այսպիսի խորագիր, „ԱՒՐՀՆՈՒԹԻՒՆ ՈՐ ԿԱՐԴԱՑ, ԳՈՎՈՒԹԻՒՆ ՈՐ ԼՍԷ, ՓԱՌՔ ՏՈՒԱՒՂԻՆ, ԵՒ ՅԻՇԱՏԱԿ ԳՐՉԻՍ: ԱՄԷՆ: ԹՈՒԱԿ. ՉԽԴ. ԳՐԵՑԱՒ: Զոր երեւի գրեալ յիշատակեալդ Ստեփաննոս: Իսկ ոտանաւոր յիշատակարանիս ոսկեզօծ գլխատառքն միայն ոչ են ինքնաձեռագիր թագաւորին, այլ Ստեփաննոս գրչին:

Յաւարտ սորին է եւ տեղի քառանկիւն նման թագաւորական կնքոյ, զոր աւաղ, անհարազատ իմն օտար ձեռք հատեալ բարձեալ է ի բաց:

Ա.

---

# ԱԶԳԱՅԻՆ

### ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

. . . . Խմբագրութեան «Արարատ» ամսագրոյ.

. . . Այժմ բերկրութիւն լուր մը կը հաղորդեմ, որ եթէ Արարատայ միջոցաւ հրատարակելու լինիք, կանխապէս շնորհակալութիւնս կընդունիք: Քաղաքիս վարժարանը բաւական թուով աշակերտներ ունի և դըպրոցական տարեգլուխն Ս. Լուսաւորչի տօնին ըլլալուն՝ միամեայ շրջանի քննութիւնը բրած ենք: Յետ աւարտման Եկեղեցւոյ ժամը 3-ին սկսեցինք քննութիւնը, ուր հրաւիրեալ էին Քոմիզականաց երկու վարդապետներ իշխանօքն, Ռուսիոյ Վան. Էկէնս պարոն Յովհաննէս Ունձեան իւր թարգմաններով: Քրիստոնէութեան երկրորդ մասի աշակերտաց քննութիւնը սկսաւ անոնցմէ մէկուն կարդացած մէկ ճառով. արդարեւ գովութեան արժանի էր աշակերտաց յառաջադիմութիւնը որ հայկական ոճերու ունեցած հմտութիւնին սքանչելի կերպով ցուցուցին. յետոյ 1-դ մասի աշակերտաց քննութիւնն եղաւ՝ որ նոյնպէս կարճ միջոցի մը մէջ ունեցած յառաջադիմութիւնին սքանչելի է. այս քննութիւնք գե-